

Հ Ր Ա Մ Ա Ն N 102-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«15» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**ԼԻՊԱՐԻՏ ԴՐՄԵՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 01/13/2/4608-14 գրությունը և Լիպարիտ Դրմեյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-15) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Լիպարիտ Մամիկոնի Դրմեյանի հետ 2014 թվականի դեկտեմբերի 15-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ